ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ Մ. Վ.

Հայաստանից բնակչության արտագաղթի հարցը վերջին շրջանում լայն քննարկման առարկա է դարձել գիտական, հասարակական-քաղաքական, զանգվածային լրատվության միջոցների շրջանակում: Մատնանշելով պաշտոնական և ոչ պաշտոնական վիճակագրական տվյալները՝ հաճախ մտահոգություն է հնչում Հայաստանի «դատարկվելու» մասին, և իրավամբ հանրապետությունից դուրս բնակչության տեղաշարժերը արդի հայ իրականության առջև ծառացած ամենահրատապ խնդիրներից են: Այդ մտահոգությունն ունի իրական հիմքեր, քանի որ հանրապետությունից դուրս բնակչություն տեղաշարժերի նկատմամբ դեռևս բացակայում է պետական քաղաքականության կիրառումը, հետևաբար այն ընդունել է զանգվածային բնույթ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, սկսած 1992 թ., Հայաստանը լքած բնակչության թիվը տատանվում է 900 հազարից մինչև 1 մլն մարդ[1]: ՄԱԿ-ի 1996 թ. Մարդկային զարգացման զեկույցում 1991-1995 թթ. տեղաշարժերի հետևանքով Հայաստանից մեկնել է 677 հազ. մարդ, կամ նրա բնակչության յուրաքանչյուր հինգերորդը մշտապես կամ ժամանակավորապես թողել է հանրապետությունը[2]: 2001 թ. մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի առկա և մշտական բնակչության տարբերությունը կազմել է 210417 մարդ[3], իսկ ըստ ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկների՝ 1991-2000 թթ.-ին՝ 1մլն 250 հազարից մինչև 1 մլն 300 հազ. մարդ[4]: Մեր հանրապետությունից զանգվածային արտահոսքի ժամանակաշրջան են համարվում 1992-1994 թվականները: Դա պայմանավորված էր Հայաստանի տնտեսությունում առկա խոր ճգնաժամով, բնակչության գործազրկության բարձր մակարդակով, աղքատացման և կենսամակարդակի կտրուկ անկմամբ, էներգետիկ շրջափակմամբ: Ըստ փորձագիտական գնահատման՝ հանրապետության բնակչության արտահոսքը կազմել է շուրջ 980-990 հազ. մարդ, ներհոսքը՝ 370 հազ. ռեէմիգրանտ, շրջանառությունը՝ մոտ 1.4 մլն մարդ կամ երկրի բնակչության թվի 40%-ը, իսկ բացասական մնացորդը՝ մոտ 610-620 հազ. մարդ կամ

---

[1] *Միգրացիոն իրավիճակը ՀՀ-ում, http:://backtoarmenia.am/?page=ma&hcat=85&*

[2] *Հայաստան, ՄԱԿ-ի մարդկային զարգացման զեկույց, Ե., 1996, էջ 14:*

[3] *Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները, Ե., 2003, էջ 143:*

[4] **Խոջաբեկյան Վ.,** *Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., 2001, էջ 308:*

երկրի բնակչության թվի գրեթե 1/5-ը[5]: Հայաստանից արտաքին միգրացիայի ակտիվության նվազեցման շրջանը համարվում է 1995-2001 թթ., որը պայմանավորված էր մի կողմից Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման միտումներով, մյուս կողմից էմիգրանտների դրամական փոխանցումներով, որը նպաստեց երկրում մնացածների կենսամակարդակի քիչ թե շատ բարելավմանը, ներքին աշխատաշուկայի լարվածության նվազեցմանը: Ըստ փորձագիտական գնահատման՝ արտահոսքը այդ ժամանակահատվածի համար կազմել է 600 հազ. մարդ, ներհոսքը՝ շուրջ 350 հազ. մարդ, շրջանառությունը՝ մոտ 950 հազ. մարդ կամ երկրի բնակչության թվի գրեթե 30%-ը, իսկ բացասական մնացորդը գրեթե 250 հազ. մարդ կամ երկրի բնակչության թվի մոտ 8%-ը[6]: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2002-2010 թթ. ողջ ընթացքում Հայաստանն ընդունել է 11.7 հազ. իմիգրանտ, ունեցել է 69.2 էմիգրանտ և 57.5 հազար արտաքին միգրացիայի բացասական մնացորդ: Ընդ որում, այդ բացասական մնացորդի 46.7 հազար մարդը բաժին է հասնում ԱՊՀ երկրներին, իսկ 10.8 հազ. մարդը՝ այլ, այդ թվում՝ Եվրամիության երկրներին[7]: Արտաքին միգրացիայի բացասական մնացորդի բարձր ցուցանիշներ գրանցվել են 2002-2007 թթ., իսկ 2008 թ.-ից դիտարկվել են նվազման միտումներ:

Անդրադառնանք նաև 2007 թ. իրականացված միգրացիայի համալիր ընտրանքային հետազոտության արդյունքներին. 2002 թվականից մինչև 2007 թ. հոկտեմբերը երկրից արտաքին միգրացիայի պատճառով բացակաների զանգվածը կազմել է շուրջ 205.6 հազ. մարդ[8]: Միջազգային զեկույցներում տեղ գտած 2010 թ. տվյալների համաձայն՝ Հայաստանի բնակչության արտաքին միգրացիան կազմել է - 574 հազ., 2005 թ.՝ - 493 հազ., իսկ 2010 թ.՝ -324 հազ. մարդ: Նրանք համապատասխանաբար կազմել են Հայաստանի բնակչության թվաքանակի 18.7%-ը, 16.1%-ը և 10.5%-ը[9]:

Միգրացիայի բացասական սալդոն, այսինքն՝ հանրապետությունից մեկնածների թվի գերազանցումը հանրապետություն ժամա-նածների համեմատությամբ 2010 թ. կազմել է 46.7 հազ. մարդ, 2011 թ.-ին՝ 43.8 մարդ[10], իսկ արտերկրից դրամական փոխանցումները 2010 թ. կազմել են 1 071973 ԱՄՆ դոլար[11]: Բերված վիճակագրական

---

[5] *Միգրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2009, էջ 39:*

[6] *Նույն տեղում, էջ 35:*

[7] *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Ե., 2011, էջ 118:*

[8] *ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Ե., 2008, էջ 40):*

[9] *World Migration Report 2010 the Future of Migration: building Capacities for Change, IOM, p. 191-192.*

[10] *Միջազգային սահմանահատումների ծավալները 2000-2012թթ., www.smsta.am*

[11] *ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումներ, http://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx.*

տվյալները ներառում են նաև Հայաստանից աշխատանքային միգրացիան[12]: Ըստ «Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ» ՀԿ-ի հետազոտության տվյալների՝ 2002-2005 թթ. Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների բացարձակ թիվը կազմել է 116-147 հազ. մարդ կամ ՀՀ մշտական բնակչության 3.5- 4.6%-ը[13], 2005-2007 թթ.՝ 96-122 հազ. մարդ կամ Հայաստանի մշտական բնակչության 3.0-3.8%-ը[14]: Միգրացիայի վերաբերյալ ներկայացված վիճակագրական տվյալների հիման վրա մասնագետները քննարկում են դրա պատճառները՝ հանրապետության համար ունեցած տնտեսական և ժողովրդագրական հետևանքների տեսանկյունից: Մինչդեռ միգրացիան ավելի բարդ երևույթ է, որը ներառում է սոցիալ-հոգեբանական և մշակութային մի շարք դիտանկյուններ: Դրանք նաև կարիք ունեն առանձին ուսումնասիրության: Միգրանտները, երկար տարիներ մեկնելով հանրապետությունից արտագնա աշխատանքի, ապրելով, աշխատելով և այլէթնիկ միջավայրում ինտենսիվ շփվելով տեղի բնակչության հետ, կրում են մշակութային ազդեցություն: Այսինքն՝ միգրացիան համարվում է մշակույթի տարածման կարևոր միջոց, երբ տեղափոխված մարդկանց խումբը կամ ընդունում է տվյալ տարածքի մշակութային առանձնահատկությունները, կամ էլ կիսով չափ է ընդունում՝ ստեղծելով իր ենթամշակույթը: Միգրացիայի հետևանքով այդ տարածքում ապրողները կրում են նաև միգրանտների մշակութային ազդեցությունը[15]: Բացի դրանից, նրանք այլէթնիկ միջավայրում ձևավորում են նոր հարաբերություններ և ներգրավվում են նոր, այդ թվում ոչ միայն հայկական էթնիկ, որոնք միավորում են հարազատներին, ընկերներին, բարեկամներին, հայրենակիցներին[16], այլև տեղի սոցիալական ցանցերում: Սոցիալ-մշակութային առումով կարևոր է նրանց ընտանիքների վրա այդ երևույթի ունեցած ազդեցության բացահայտումը, քանի որ միգրանտները երկար ժամանակով կամ տարվա մի մասը գտնվում են հանրապետությունից դուրս, իսկ ընտանիքները մնում են տեղում. նրանց համար բնութագրական է «հեռավորության վրա ձևավորված» ընտանիք հասկացությունը՝ դրանից բխող հետևանքներով: Մասնավորապես, ընտանիքում և ընտանեկան հարաբերություններում ի՞նչ փոխակերպումներ են առաջանում, սոցիալ-հոգեբանական առումով ի՞նչ խնդիրների են առնչվում, որքանո՞վ է այն նպաստում հանրապետությունում անկայուն, լքված կամ ամուսնալուծված ընտանիքների թվի ավելացմանը, միգրացիան այդ ընտանիքների համար սոցիալական և մշակութային ի՞նչ կապիտալ է ձևավորում:

---

[12] *Այդ երևույթի վերաբերյալ օգտագործվում են աշխատանքային միգրացիա, սեզոնային միգրացիա, արտագնա աշխատանք տարբեր անվանումները: Գեղարքունիքի և Շիրակի մարզերի ժողովրդախոսակցական լեզվում մինչև 1990 թ. առավել օգտագործվում էր խոպանչիներ անվանումը, որի ծագումը կապված է 1950-1960-ական թթ. ԽՍՀՄ-ի խոպան հողերի յուրացման հետ:*

[13] *Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002-2005թթ., Ե., 2005, էջ 63:*

[14] *Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2005-2007թթ., Ե., 2007, էջ 76:*

[15] **Шостак С.** *Механизмы культурной диффузии,* http://www.i soc.com.ua/journal/07_Shostak.pdf, 11.06.12

[16] **Фирцов Е., Кривышина В.** *К изучению коммуникационной среды российской армянской диаспоры (по материалам полевых исследований локальных групп Владимирской области) (Диаспоры, М., 2004, 1, с. 10).*

Նշված խնդիրները բացահայտելու համար էթնոսոցիոլոգիական հետազոտության միջոցով միգրանտներից կամ նրանց ընտանիքի անդամներից կարծիքներ են հավաքվել ընտանիքի առջև ծառացած հույժ կարևոր խնդիրների, ձևավորված հարաբերությունների, դերերի և կարգավիճակների փոփոխության, այլազգի ներկայացուցիչների հետ ամուսնության և այլ հարցերի վերաբերյալ[17]: Համեմատության համար նշենք, որ պանդխտության թեման հուզել է նաև XIX դ. մտածողներին: Մ. Նալբանդյանը, դեռևս իր ժամանակին անդրադառնալով այդ խնդրին, նշում էր. «Աղքատությունը ստիպում է նորան թողնելու յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար: Բայց այդ տեղում ևս նորան հանդեպ է դուրս գալիս էապես նույն աղքատությունը, գուցե մի փոքր քաղաքային ամոք կերպարներով[18]«: Իսկ «Մշակ» թերթի թղթակիցը, անդրադառնալով Գանձակի գավառի պանդխտությանը, հանգում է նրան, որ իրենց գավառում «Պանդխտությունը կվերանայ այն ժամանակ, երբ կարիք կը պակասի մեր գյուղերում. նա (պանդխտությունը՝ Գ. Մ.) աղքատության անբաժան ընկերն է»:[19] «Արձագանք» պարբերականի էջերից տեղեկանում ենք, որ յուրաքանչյուր ընտանիք ուներ մեկ-երկու և նույնիսկ չորս-հինգ պանդուխտ[20]: Նրանք հիմնականում մեկնում էին Կ. Պոլիս, որտեղ զբաղվում էին ջրկիրությամբ, բեռնակրությամբ: Բացի Կ. Պոլսից, աշխատում էին նաև Սիրիայի մահուդի ձեռնարկություններում, Կեսարիայի կտավագործական արհեստանոցներում, Ադանայի բամբակի պլանտացիաներում: Ծանր էին նրանց ինչպես աշխատանքային, այնպես էլ կյանքի պայմանները: Արտագնացները գիշերում էին հրապարակներում և կեղտոտ իջևանատներում: Այդ բոլորը հանգեցնում էր նրան, որ հաճախ պանդուխտի կյանքն ընդհատվում էր արտագնա աշխատանքի վայրում:

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ ազգագրագետների հավաքած դաշտային նյութերի քննարկումից պարզվում է, որ չնայած գյուղական բնակչության կայուն էթնիկական ավանդույթների և խիստ նորմերի առկայությանը, այնուհանդերձ, արտագնացի երկարատև բացակայությունը երբեմն հանգեցնում էր ամուսնալուծությունների: Առանձնապես ընտանիքի համար ծանր հետևանքներ էին ունենում արտագնացների սեռական հիվանդությունները: Նրանք գյուղական կենցաղ էին

---

[17] Քանակական հարցումներն իրականացվել են 2006 թ. Հայաստանի 4 մարզերի 12 գյուղական համայնքների 360 տնային տնտեսությունների շրջանում, իսկ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2007-2012 թթ. գիտարշավների միջոցով, ինչպես նաև 2001 թ. միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Հայաստանի 10 մարզերում խորացված անհատական հարցազրույցներ են իրականացվել 83 աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների հետ:

[18] **Նալբանդյան Մ.,** Երկեր, հ. 4, Ե., 1983, էջ 64:

[19] Մշակ, 1899, N 119:

[20] Մուշի Խաս գյուղից, որն ուներ 250 տուն, արտագնացության էր մեկնում 300-400 մարդ, Նորաշենն ուներ 200 տուն, 300 պանդուխտ և այլն: Տե՛ս □Արձագանք□, 1887, էջ 269:

ներմուծում քաղաքային մշակույթի մի շարք տարրեր, որը առաջին հերթին դրսևորվում էր տան հարդարանքում, հագուստում, ազատ ժամանակի կազմակերպման ձևերում[21]: «...Գերդաստանի անդամներից մի քանիսը գաղթում են քաղաքներում աշխատելու,- գրում է Ե. Լալայանը,- ընդունում են այնտեղի գաղափարներն ու սովորույթները: Իրենց վաստակը ամբողջովին տան մեծին չեն ուղարկում, շատ անգամ ցանկանում են կնոջը իրենց մոտ տանել, իրենց երեխային ուսման տալ....»[22]: Ըստ Ե. Լալայանի՝ արտագնացությունը արագացրեց այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցող նահապետական գերդաստանների քայքայումը:

Անդրադառնանք հանրապետությունից միգրացիայի մղող գործոնների ուսումնասիրությանը: «Որո՞նք են արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները» հարցի պատասխանները վկայում են, որ աշխատանքային միգրացիան Հայաստանում կապված է աշխատանքի բացակայության հիմնախնդրի հետ (80.1%): Ընդ որում, մասնակիցների 38.5%-ը որպես վճռորոշ դրդապատճառ համարել է տեղում աշխատանքի, 27,9%-ը՝ բավարար եկամուտ ապահովող աշխատանքի, իսկ 13.5%-ը՝ մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը[23]: Անշուշտ, նշված պատճառները վերաբերում են հանրապետության բնակչության առջև ծառացած զբաղվածության և գործազրկության առանցքային խնդիրներին, մինչդեռ առօրեականության շրջանակներում աշխատանքային միգրացիայի դրդապատճառները ավելի խորն են և վերջին հաշվով հանգեցնում են ընտանիքը «պահելուն», իսկ միգրացիայի մեկնելու հետ կապված որոշումների կայացումը նպատակ է հետապնդում լուծելու ընտանիքի առջև ծառացած կենսական մի շարք հարցեր:

Այդ կապակցությամբ ներկայացնենք խորացված հարցազրույցներից մի քանի պատասխաններ. «Գնում եմ, որ տուն պահեմ, երեխաներին սնունդով, հագուստով ապահովեմ, ուսման վարձեր տամ, ուսանողի ծախսերը հոգամ» (Շիրակի մարզ, գ. Ազատան, տղամարդ, 49 տ.): «Հաշմանդամ երեխա ունեմ, որի համար թանկ դեղեր են հարկավոր» (Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, տղամարդ, 42 տ.):

---

[21] *Ըստ Ե. Լալայանի՝ Ալաստան գյուղի բնակիչները (Զավախքի պատմաազգագրական շրջան), որոնք արտագնացության էին մեկնում Կ. Պոլիս, մյուս գյուղացիների հետ համեմատած, ավելի զարգացած էին և կրթված, իսկ տները փայլում էին մաքրությունից: Տե՛ս Ազգագրական հանդես, գիրք Ա, Շուշի, 1896, էջ 174:*

[22] *Ազգագրական հանդես, գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 126:*

[23] **Գալստյան Մ.,** *Աշխատանքային միգրացիան հետխորհրդային Հայաստանի գյուղական բնակչության շրջանում (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2011, թիվ 1-2, էջ 169):*

Աղյուսակ 1

Աշխատանքային միգրացիայի մեկնելու հիմնական դրդապատճառները[24]

Տեղում աշխատանքի բացակայությունը	38,7
Ցածր աշխատավարձը, որը չէր բավականացնում նորմալ ապրելու համար	27,9
Մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը	13,5
Գործարարությամբ զբաղվելու համար պայմանների բացակայությունը	10,1
Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը	5,3
Իրավական անպաշտպանվածությունը	3,7
Այլ	0,7
Ընդամենը	100,0

«Արդեն 28 տարեկան եմ, բայց ամուսնացած չեմ, գնում եմ այդ նպատակով փող աշխատելու» (Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ): «Երկու տղաներս ամուսնացած են, բայց բոլորս միասին ենք ապրում: Գնում ենք Ռուսաստան, որ փող աշխատենք և մեծ տղայիս համար առանձին տուն կառուցենք» (Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի, տղամարդ, 56 տ.): «Աղջկաս նշանել և ամուսնացնում եմ: Գնում եմ այդ ծախսերը հոգամ» (Վայոց ձոր, գ. Արենի, տղամարդ, 49 տ.): «Հորս գերեզմանը չեմ սարքել, գնում եմ փող բերեմ, որ գերեզմանը սարքեմ» (Տավուշի մարզ, Իջևան, տղամարդ, 47 տ.): «Պարտքեր ունեինք, տղայիս հետ երկու տարի գնացել եմ Ռուսաստան՝ խոպան, փող աշխատելու համար» (Տավուշի մարզ, Իջևան, տղամարդ, 45 տ.): Այսինքն՝ ընտանիքի առջև ծառացած կենսական հարցերի լուծման համար նրանք թողնում են ընտանիքը և մեկնում արտերկիր աշխատանք փնտրելու, որի հետևանքով ընտանիքը բախվում է նաև սոցիալ-հոգեբանական մի շարք խնդիրների:

«Քանի՞ տարի է, որ մեկնում է / մեկնել էիր արտագնա աշխատանքի» հարցի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ միգրանտների 10.3%-ը ընտանիքից ընդմիջումներով կամ առանց ընդմիջումների բացակայել է. 1, 18.2%-ը՝ 2, 18.8%-ը՝ 3, 22.3%-ը՝ 4-5, 15.8%-ը՝ 6-8, 10.6%-ը՝ 9-12, իսկ 4.1%-ը՝ 13-16 տարի: Մինչդեռ ընտանիքն ունի իր զարգացման կենսափուլերը՝ ամուսնություն և զույգերի փոխադարձ ադապտացիա, երեխաների ծնունդ, դաստիարակություն և նրանց նախապատրաստումը ինքնուրույն կյանքի և այլն: Այդ փուլերից յուրաքանչյուրն իր տևողությամբ և բովանդակությամբ ընտանիքի ամրության տեսանկյունից առանձնանում է աշխատանքային միգրանտների շրջանում, քանի որ ըստ հետազոտության արդյունքների՝ նրանց մոտ մեկ քառորդը արտագնա աշխատանքի է մեկնել մինչև առաջին երեխայի ծնվելը, մեկ հինգերորդը՝ առաջին երեխայի ծնվելուց հետո, մեկ երրորդը՝ միջդպրոցական տարիքի, իսկ մնացած մասը՝ դպրոցական և հասուն

[24] *Նույն տեղում, էջ 169:*

տարիքի երեխաներ ունեցող ընտանիքներից[25]*: Խորացված հարցազրույցի ընթացքում միգրանտները կամ նրանց ընտանիքի անդամները պատմել են բազմաթիվ դեպքեր, երբ միգրանտները նշանված վիճակում, հղի կնոջը թողած կամ երեխան ծնվելիս գտնվել են արտագնա աշխատանքի վայրում կամ ընտանիքին և երեխաներին չեն տեսել մի քանի տարի:*

Այսպիսով, աշխատանքային միգրացիան որոշ դեպքերում լուրջ մարտահրավեր է նետել ընտանիքի ամրությանը և հիմք է վերջինիս մոդելի փոխակերպումների համար, որը, ըստ հետազոտության արդյունքների, ունի հետևյալ դրսևորումները.

Ամուսնալուծված ընտանիքների թվի ավելացում: *Ընտանիքի անդամների ժամանակավոր բաժանումը բարձրացնում է ամուսնալուծվելու ռիսկայնության աստիճանը, որի հետևանքով համայնքներում հետզհետե աճել է ամուսնալուծված ընտանիքների թվա- քանակը: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության 2010 թ. տվյալների՝ Հայաստանում գրանցվել է 17984 ամուսնություն, իսկ ամուսնալուծությունները դրանց 16.7%-ն*[26] *են, ընդ որում, դրա մի մասը կապ ունի աշխատանքային միգրացիայի հետ: Այսպես, Տավուշի մարզի Իջևան քաղաքի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի վարիչի տվյալներով՝ 2011 թ. գրանցվել է 26 ամուսնալուծություն, ընդ որում մեկ երրորդը՝ աշխատանքային միգրացիայի պատճառով: Նշենք, որ հատկապես գյուղական համայնքներում կանայք, հաշվի առնելով հասարակական կարծիքը, ամուսնալուծության հարցում շատ քիչ են նախաձեռնություն ցուցաբերում: Ամուսնալուծությունները նույնպես կապված են առօրեականության մի շարք իրավիճակների հետ, որից ելնելով՝ նրանք որոշում են կայացնում: Օրինակ, ամուսինը Ռուսաստանում երկար տարիներ կապնվել է ուրիշ կնոջ հետ և չի ուզում վերադառնալ, Ռուսաստանում նորից ամուսնացել է, ունի երեխա, ձեռք է բերել քաղաքացիություն, ամուսինը լսել է, որ իր բացակայության ժամանակ կինը վարվել է նույն կերպ, ամուսինները, երկար տարիներ իրար հետ չապրելով, օտարացել են, ամուսինը երկար տարիներ մեկնել է խոպան, բայց ընտանիքին փող չի ուղարկել, ամուսնուց շուրջ 10 տարի ոչ մի լուր չունի՝ դիմել է ապահարզանի և անհայտ բացակայող ճանաչելու համար և այլն: Այսպես, ներկայացնենք Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանի մի քանի համայնքներում մեր հավաքած տվյալները, որը 2012 թ. հունիսի դրությամբ ուներ հետևյալ պատկերը:*

---

[25] **Վարդանյան Լ., Գալստյան Մ.,** *Ընտանիքի և ամուսնության հիմնախնդիրները Տավուշի մարզի աշխատանքային միգրանտների շրջանում (Տավուշ, Նյութական և հոգևոր ժառանգություն, Ե., 2009, էջ 239-241):*

[26] *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, Ե., 2011, էջ 22:*

Աղյուսակ 2

Ամուսնալուծությունների թիվը Տաշիրի տարածաշրջանի 5 համայնքներում

N	Համայնքի անվանումը	Տնային տնտե-սությունների թվաքանակը	Արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը	Ամուսնալուծվածների թվաքանակը
1	Տաշիր	13.225	7889	326
2	Մեծավան	7002	3800	155
3	Սարչապետ	2100	1322	88
4	Նորաշեն	1820	1100	73
5	Լեռնահովիտ	1729	1018	30

Հետազոտության արդյունքներով՝ այդ բաժանությունների զգալի մասն ունի նաև զուտ ձևական բնույթ՝ «փաստաթղթային ձևակերպումների տեսքով», որի միջոցով նրանք այստեղ ճանաչում են երեխայի հայրությունը, իսկ Ռուսաստանի Դաշնությունում ձևակերպում են կեղծ ամուսնություն՝ հեշտացված կարգով կարգավիճակ ձեռք բերելու համար: Ըստ նույն բաժնի վարիչի դիտարկումների՝ միայն 2012 թ. հունիսի տվյալներով «կար 12 դիմում ամուսնալուծության համար, բայց 3 դեպք է, որ համապատասխանում է իրականությանը: Մնացածը փաստաթղթային է, քանի որ ՌԴ-ում ուզում են կարգավիճակ ձեռք բերել»:

Թերևս նշված հանգամանքներով կարող ենք բացատրել հարցվածների 65.8%-ի կողմից տրված այն գնահատականը, որ աշխատանքային միգրացիան նպաստում է ամուսնալուծությունների աճին:

Աղյուսակ 3

Աշխատանքային միգրացիայի ազդեցության գնահատումը

	Դրա-կան	Ավելի շուտ դրական	Բացա-սական	Ավելի շուտ բացասական	Չի ազդում
Երեխաների թվաքանակի աճի	0	1,4	56,1	5,8	36,7
Ամուսնությունների թվաքանակի աճի	0,8	5,3	52,2	10,8	30,6
Ամուսնալուծություն-ների աճի	6,9	3,3	50,8	15,0	23,1
Ընտանիքում բարո-յահոգեբանական մթնոլորտի վատթարացման	2,5	4,2	51,4	22,5	18,9
Տնտեսական աշխա-տանքներում ընտանիքի մյուս անդամների ծանրաբեռնվածության ավելացում	10,6	1,4	51,1	28,6	8,3

Միգրանտի առողջական վիճակի	1,1	1,3	57,2	27,8	13,1
Արտագնա աշխատանքի վայրում դժբախտ պատահարների թվաքանակի աճի	8,9	1,4	40,8	31,7	16,4
Ընտանիքի նյութական վիճակի բարելավման	31,4	57,2	3,9	3,6	3,9

Ամուսնալուծությունների մի մասն էլ հետևանք է արտագնա աշխատանքի հետևանքով ձևավորված ազգամիջյան խառնամուսնությունների: Այդ ընտանիքները ավելի հակված են կոնֆլիկտների, քանի որ այլազգի աղջիկները դժվարությամբ են հարմարվում տեղի մշակութային-կենցաղային պայմաններին, ինչպես նաև ազգային նիստուկացին ու վարքի կանոններին[27]*: Ամուսնալուծվող խառնազգի ընտանիքների համար բնակչության շրջանում հաճախ կարելի է լսել «ռուս աղջիկը հարս չի դառնա», իսկ հաջողվածների համար՝ «լավ ռուսը հայ հարսից լավն է» արտահայտությունը:*

Համեմատության համար նշենք, որ այդ երևույթը տարածված էր նաև Խորհրդային Հայաստանի լեռնային և նախալեռնային այն շրջաններում, որտեղ կան արտագնացության բարձր տեմպեր: Այսպես, 1984 թ. Երևանի և Գյումրիի տարբեր շրջաններից, 1984-1986 թթ. Տաշիրի և Գավառի ժողդատարաններից վերցված ապահարզանների գործերից պարզ է դառնում, որ ամուսնալուծությունների որոշ մասն առնչվում է սեզոնային արտագնացությանը: Այս իրադրությունում ամուսնալուծության համար հանդես է գալիս երկու կարևոր պատճառ. առաջին՝ «ամուսինը» «այնտեղ» (խոպանում) նոր ընտանիք է կազմել, ուզում է բաժանվել, որպեսզի ձևակերպի նոր ամուսնությունը, երկրորդ՝ կինը (ռուս) չի համակերպվել տեղի պայմաններին, վերադարձել է հարազատ վայրեր: Նման գործերը Երևանում կազմում էին 1,5%, Գյումրիում՝ 18,8%, Գավառում՝ 8,5%[28]*:*

Երկու ընտանիքի երևույթի տարածում՝ մեկը տեղում, մյուսը՝ արտագնա աշխատանքի վայրում: *Աշխատանքային միգրանտների որոշ մասի շրջանում, բացի տեղում օրինական ընտանիքից, մուտքի երկրներում լայն տարածում են ստանում արտաամուսնական կապերը, երկրորդ ընտանիք ունենալու երևույթը: Ելնելով այն հանգամանքից, որ միգրանտները համարվում են ընտանիքին նյութական միջոցներով հիմնական ապահովողը, նրանց այդ վարքագիծը հաճախ հանդուրժում են ընտանիքի մյուս անդամները: Նրանց կանայք հաճախ այսպես են*

[27] **Գալստյան Մ.,** *Խառնամուսնությունները և ինքնության խնդիրները ՀՀ աշխատանքային միգրանտների շրջանում (Հայի ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում, Ե., 2010, էջ 143):*

[28] **Գալստյան Մ.,** *Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.) (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 26, Ե., 2009, էջ 68):*

արտահայտվում. «Դրսում ինչ ուզում են՝ թող անեն, կարևորը, որ կարողանում են պահել իրենց ընտանիքը»[29]:Դերերի, կարգավիճակների և արժեքային կողմնորոշումների փոփոխության հետևանքով այդ ընտանիքները հաճախ դադարում են կրել իրենց վերապահված մի շարք գործառույթներ, որի հետևանքով ընտանիքի սիրո և փոխըմբռնման ամրության հիմքերը իրենց տեղը զիջում են տնտեսական գործոնին: Վայոց ձորի մարզում հարցազրույցին մասնակցած կանացից մեկը պատմեց հետևյալը. «Գյուղում կա մի դեպք, երբ տղամարդկանցից մեկը անօրինական ձևով Ռուսաստանում ամուսնացել է և ռուս կնոջից ունի երեխաներ և թոռներ: Բայց շարունակում է գյուղում ապրող ընտանիքին օգնել: Գյուղ չի գալիս, բայց տղային բանակ տանելու հետ կապված ծախսերը նա է կատարել: Այստեղի կնոջից բաժանված չէ: Գյուղում նրա այդ վարքագիծը չեն դատապարտում: Կինը նույնիսկ մի անգամ գնացել է ամուսնու մոտ, որոշ ժամանակ մնացել և վերադարձել»: Անշուշտ, այդ երևույթներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Այդ տեսակետի կողմնակիցները հարցման մասնակիցների շրջանում կազմել են 73.9%: Համեմատական կարգով նշենք, որ 1980-ական թվականներին միգրանտների ընտանիքների անդամները հիմնականում բացասական են գնահատել միգրանտի շեղված սոցիալական վարքագիծը, բայց ներկայումս այդ երևույթների նկատմամբ ինչպես ընտանիքի, այնպես էլ համայնքային մակարդակով մեծացել է հանդուրժողականությունը:

Լքված ընտանիքների թվի աճ: *Հետազոտության ընթացքում գրանցվել են մի շարք դեպքեր, երբ ամուսինը լքել է և տարիներ շարունակ կապ չի պահպանել ընտանիքի հետ: Հատկապես գյուղական համայնքներում դեռևս ամուր պահպանվող ազգային ավանդույթների և հասարակական կարծիքի ազդեցությամբ այդ ամուսնալուծությունները դեռևս չեն ստանում պաշտոնական ձևակերպում: Կան նաև դեպքեր, երբ ընտանիքը լքած ամուսինը ծերանալուց հետո վերադառնում է: Բերենք հարցազրույցից մի հատված, որը գրանցվել է Գեղարքունիքի մարզում. «Մեր գյուղում կա 5-6 դեպք, երբ տղամարդիկ երկար տարիներ Ռուսաստան արտագնացության մեկնելուց հետո լքել են ընտանիքը: Սակայն ծերանալուց հետո դրսի ընտանիքը նրան չի պահել և ստիպված վերադարձել են գյուղ: Կանայք, հասարակական կարծիքի ազդեցության ներքո, որպես իրենց երեխաների հայր, ինչպես իրենք են ասում, նամուսի համար ընդունել են: Բայց վերաբերմունքը փոխվում է, և նրանք ընտանիքում արդեն չունեն նույն կարգավիճակը»:*

«Կիսված» ընտանիքներ: *Կապված աշխատանքային միգրացիայի հետ՝ տան տղամարդը կնոջ կամ տղայի հետ գտնվում է արտագնա աշխատանքի վայրում, իսկ կինը երեխաների կամ երեխաները տատիկի ու պապիկի հետ ապրում են հայրենիքում: Կիսված ընտանիքների այդ մոդելը լայն տարածում ունի համարյա*

---

[29] **Գալստյան Մ.,** *Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում, Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրներ, Ե., 2001, էջ27-29):*

բոլոր միգրանտների շրջանում: Շիրակի մարզի հարցազրույցներից մեկում կինը իր ընտանիքի մասին պատմեց հետևյալը. «Ամուսինս և տղաս շուրջ քսան տարի մեկնում են խոպան: Նոր տարվանը վերադառնում են, հետո նորից մեկնում: Այստեղ մնում են ամուսնուս մայրը, ես, հարսս ու թոռներս: Երեխաները շատ են կարոտում իրենց հորը և պապիկին: Մենք էլ տարիներ շարունակ սպասում ենք նրանց ան-փորձանք վերադարձին»:

Ընտանիքում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի փոփոխություն: *Հարցվածների 73.5%-ի կարծիքով աշխատանքային միգրացիան ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն է ունենում ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Բացի դրանից, տղամարդու երկարատև բացակայությունը ոչ միայն հիմք է ընտանիքում կոնֆլիկտների աճին, այլև խթանում է նրանց կարգավիճակների և դերերի, ներընտանեկան փոխհարաբերությունների փոփոխությանը: Միգրանտի բացակայության ժամանակ տնային տնտեսության ողջ աշխատանքները առաջին հերթին ընկնում են կանանց, տարեցների և անչափահաս երեխաների ուսերին: Պայմանավորված այդ հանգամանքով՝ կանանց շրջանում տեղի է ունեցել ավանդական մի շարք կարգավիճակների և դերերի փոփոխություն: Կանայք ընտանիքում նախկինում հիմնականում զբաղվում էին կենցաղի և երեխաների դաստիարակության խնդիրներով: Ներկայումս կանայք ընտանիքից դուրս կատա-րում են իրենց վերապահված և չվերապահված մի շարք գործառույթներ, մեծացել է նրանց տնտեսական ակտիվությունը: Տան գլխավորի բացակայության ընթացքում նրանք մասնակցում են նաև համայնքի հասարակական կյանքին և կարևոր միջոցառումներին, հարսանեկան և թաղման ծեսերին, շփվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հետաքրքիր է այն խնդիրը, թե այդպիսի իրավիճակում արդյո՞ք նրանք շարունակում են մնալ այդ ընտանիքների գլխավորը: Հարցման մասնակիցների 52.2%-ը նրանց համարել է ընտանիքի գլխավոր և կարևոր հարցերի վերաբերյալ վերջնական վճիռներ կայացնողներ: Այդ հարցում ազդեցություն է ունեցել միգրանտների վաստակը, իսկ 47.8%-ը այդ հարցին տվել է բացասական պատասխան:*

Անշուշտ, այդ ընտանիքներում առաջնորդի դերի ստանձնումը կապված է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-հոգեբանական գործոնների հետ: Այստեղ դեռևս էական են նաև ազգային ավանդույթները և սովորույթները: Աշխատանքային միգրացիայի հետևանքով ընտանիքի առջև ծառացած հիմնախնդիրները ընդհանուր գծերով արտացոլված են նաև կատակերգերում[30]:

Հենց որ եկավ մարտի վերջը,
Մուրճն ու մալեն առավ ուսը,
Խավարեց կնոջ աչքի լույսը,
Հույսը կտրեց ամուսնուցը:

---

[30] *Կատակերգը գրի է առնվել Դիտավան գյուղում 2007 թվականին, բանասաց՝ Լուսիկ Բայրամյան:*

Կրկներգ

Խոպանիստ, գալդ բարի, } 2
Տուն-տեղ թողած արև աշխարհին՝
Էս տարի շուտ հետ արի,
Որ կինդ ուրիշ մարդ չճարի:

Խաբար էկավ՝ Ռուսաստանում,
Խոպանիստը լավ է բանում,
Ուժ ու եռանդ չի խնայում,
Երկու-երեք կին է պահում:

Դիտական գյուղի բնակիչներից մեկի ստեղծած «Խոպանիստի երգ» կատակերգից բերված հատվածը նկարագրում է նման ընտանիքներում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը:

Այսպիսով, աշխատանքային միգրացիան ընտանիքի հիմքերի ամրության քայքայման առումով վերածվել է լուրջ գործոնի, որի հետևանքով բնակչության շրջանում հետզհետե աճում է ամուսնալուծությունների և անկայուն ընտանիքների թիվը:

ТРУДОВАЯ МИГРАЦИЯ И ТРАНСФОРМАЦИЯ СЕМЬИ В ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ

ГАЛСТЯН М. В.

Резюме

Миграция армянского населения является одной из насущных проблем РА. Специалисты рассматривают ее сквозь призму экономических и демографических последствий для страны. Между тем миграция представляет собой более сложное явление. В социально-культурном аспекте весьма важно выявление ее воздействия на семьи мигрантов, поскольку для мигрантов характерно понятие “семьи на расстоянии”. Социологические исследования свидетельствуют о трансформации модели семьи, что находит отражение в росте числа нестабильных либо покинутых семей.